

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի  
գիտական խորհրդի 11.10.2021թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 39 (երեսունինը) անդամից՝ 33-ը  
(երեսուներեքը)

Նիստին մասնակցում էին՝

- |     |   |                     |
|-----|---|---------------------|
| 1   | Գիտական խորհրդի նախագահ,<br>ռեկտորի ԺՊ  | Սերոբյան Երվանդ     |
| 2.  | Ուսումնամեթոդական գործընթացի<br>կառավարման կենտրոնի<br>պրոռեկտոր-տնօրենի ՊԿ                     | Ավետիսյան Նազելի    |
| 3.  | Արտաքին համագործակցության և<br>հասարակայնության հետ կապերի<br>կենտրոնի տնօրեն                   | Մելքոնյան Հովիկ     |
| 4.  | Գիտական քաղաքականության,<br>որակի ապահովման ու կառավարման<br>կենտրոնի տնօրեն                    | Սարգսյան Արմենուհի  |
| 5.  | Գրադարան-ուսումնագիտական<br>խորհրդատվությունների,<br>նորարարությունների և<br>SS կենտրոնի տնօրեն | Խաչատրյան Թերեզա    |
| 6.  | Գիտական քարտուղար (գիտական<br>խորհրդի քարտուղար)  | Պետրոսյան Կարինե    |
| 7.  | Բնագիտամաթեմատիկական<br>ֆակուլտետի դեկանի ԺՊ  | Սարտիրոսյան Լևոն    |
| 8.  | Հումանիտար գիտությունների և<br>արվեստի ֆակուլտետի դեկան   | Մելիքյան Թամարա     |
| 9.  | Սոցիալական գիտությունների և<br>իրավունքի ֆակուլտետի դեկան                                       | Հովհաննիսյան Օֆելյա |
| 10. | Մանկավարժության ֆակուլտետի<br>դեկանի ԺՊ   | Ղուկասյան Լուսիկ    |
| 11. | Ռազմական ամբիոնի պետ  | Մկրտչյան Արթուր     |

- |     |  |                     |
|-----|--|---------------------|
| 12. | ՇՊՀ քոլեջի տնօրեն  | Դավիդյան Աշոտ       |
| 13. | ՇՊՀ ավագ դպրոցի տնօրենի ԺՊ   | Դարբինյան Կարեն     |
| 14. | ՇՊՀ արհմիության նախագահ  | Խաչատրյան Վալերի    |
| 15. | Մ.գ.դ, պրոֆեսոր, ( անենատարեց դոկտոր)  | Մկոյան Արտաշես      |
| 16. | ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր | Սարգսյան Սամվել     |
| 17. | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ                        | Մկրտչյան Արթուր     |
| 18. | Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ              | Ադանյան Գևորգ       |
| 19. | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ            | Գասպարյան Արշավիր   |
| 20. | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ        | Հովհաննիսյան Արտակ  |
| 21. | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ                         | Սահակյան Կարինե     |
| 22. | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր     | Հովհաննիսյան Անահիտ |
| 23. | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր                 | Հայրապետյան Սերգո   |

24. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ  
Կուրազյան Օֆելյա
25. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ  
Տեր-Ադամյան Շուշան
26. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ  
Մաթևոսյան Էվելինա
27. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի  
Համբարյան Ժենյա
28. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի  
Գալստյան Ամալյա
- Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի  
Հովհաննիսյան Յուլյանա
31. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի  
Թադևոսյան Մարգարիտ
32. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի Քարտեզագրություն և կատաստրային գործ մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի  
Գրիգորյան Արուսյակ
33. Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի  
Մինասյան Ելենա

## ՕՐԱԿԱՐԳ

1. ՇՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված թեկնածուներից հոգաբարձուների խորհրդի անդամների ընտրություն

Հաղ.՝ ռեկտորի ժՊ Ե. Սերոբյան

## 2. ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

2.1 ՇՊՀ-ում ուսումնառություն չիրականացվող մասնագիտությունների գծով լիցենզիայի գործողությունը դադարեցնելու եվ ՇՊՀ-ի բակալավրի կրթական ծրագրի (իրավագիտություն) լիցենզավորման փաթեթում ներառված ուսումնական պլանի հաստատման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

2.2 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ՇՊՀ-ի մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանողների ուսումնական գործընթացն իրականացնելու մասին

Հաղ.՝ ռեկտորի ժՊ Ե. Սերոբյան

Գիտական խորհրդի նախագահ Ե. Մերոբյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվորումի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ`**

33 անդամ. կողմ` 33, դեմ` 0, ձեռնպահ` 0:

Օրակարգը հաստատվեց:

### **1. ԼՍԵՑԻՆ`**

#### **ՇՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված թեկնածուներից հոգաբարձուների խորհրդի անդամների ընտրություն**

Գիտական խորհրդի նախագահ պարոն Մերոբյանը խորհրդի անդամներին իրազեկեց, որ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» նոր օրենքը ՄԴ-ի կողմից ճանաչվել է հակասահմանադրական: Պարոն Մերոբյանը ներկայացրեց նաև, որ ՀՀ կառավարության 04.05.2021թ.-ի N 704-Ն, այնուհետև նաև 08.09.2021թ.-ի N 1448-Ն որոշումներով փոփոխություններ են կատարվել ոչ միայն իրենց, այլ նաև հանրապետության մյուս բուհերի կանոնադրություններում և կարծես, վերադարձել են գործնականում «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի նախկին տարբերակին: Պարոն Մերոբյանը գիտական խորհրդի անդամներին իրազեկեց, որ վերոհիշյալ օրենքի 27-րդ կետով սահմանվում է, որ հոգաբարձուների խորհրդի անդամների թիվը պետք է լինի նվազագույնը 20 անդամ, որտեղ ուսանողներից և պրոֆեսորադասախոսական համակազմից ընտրված հոգաբարձուների խորհրդի անդամները կազմում են 25-ական տոկոս, խորհրդի անդամների մյուս 25-ական տոկոսները առաջադրվում են լիազոր մարմնի և հիմնադիրի կողմից: Պարոն Մերոբյանը ներկայացրեց նաև, որ նախկինում նախատեսված էր բուհերի հոգաբարձուների խորհրդի 24 անդամներով թվակազմ, այնուհետև ՀՀ կառավարության 04.05.2021թ.-ի N 704-Ն որոշմամբ` 20 անդամներ, որտեղ ՊԴ կազմն ուներ այլ համամասնություն` ՊԴ-ն 10 տոկոս, ուսանողները 25 տոկոս, լիազոր մարմնի կողմից առաջադրվածները 10 տոկոս և հիմնադիրի կողմից առաջադրվածները 55 տոկոսը: Պարոն Մերոբյանը ընդգծեց, որ նախկինում ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկված էին նաև քոլեջից և ավագ դպրոցից խորհրդի անդամներ, ՀՀ կառավարության 08.09.2021թ.-ի N 1448-Ն որոշմամբ ամրագրված փոփոխություններով նրանք այլևս ընդգրկված չեն:

Այնուհետև պարոն Մերոբյանը ներկայացրեց, որ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից հոգաբարձուների խորհրդի անդամների ընտրություն իրականացնելու նպատակով իրենք ղեկավարվել են ՇՊՀ հիմնադրամի ամբիոնի և ֆակուլտետի օրինակելի կանոնադրություններով` ամբիոններում, ապա ֆակուլտետային խորհուրդներում ընտրելով թեկնածուներ: Ըստ ֆակուլտետի օրինակելի կանոնադրության, յուրաքանչյուր ֆակուլտետից ընտրվել են 3-ական թեկնածուներ` 12 հոգի, որոնցից գիտական խորհրդում ընտրվելու են 5-ը: Այնուհետև

պարոն Սերոբյանը շարունակեց, որ գիտական խորհրդի անդամները նախօրոք էլեկտրոնային նամակի միջոցով իրազեկվել են պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված և ֆակուլտետային խորհուրդներում ընտրված հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուների մասին: Նա նորից ներկայացրեց թեկնածուներին ըստ ֆակուլտետների և նշեց, որ գիտական խորհրդի անդամներին է ներկայացվում պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված հոգաբարձուների խորհրդի անդամների թեկնածուներին գիտխորհրդում ընտրելու ձևաչափի առաջարկ՝ ըստ որի 12 թեկնածուներից պետք է ընտրել 5-ին: Պարոն Սերոբյանը ներկայացրեց նաև քվեաթերթիկի նախնական ձևաչափը /քվեաթերթիկ 1/ և այն քննարկման դրեց:

N	ԱԱՀ	ԿՈՂՄ
1	Մանուկյան Վարդան Ֆրանցի	
2	Նիկողոսյան Հրաչիկ Սուրենի	
3	Վալեայան Անահիտ Պարզևի	
4	Ալեքսանյան Շուշանիկ Կարապետի	
5	Գևորգյան Լուսինե Վահրամի	
6	Գուլյան Սարգիս Ֆերդինանտի	
7	Խաչատրյան Եղեգնուհի Մկրտչի	
8	Տոնոյան Աշխեն Վլադիմիրի	
9	Ֆարգադյան Հռիփսիմե Ռոբերտի	
10	Գարեգինյան Աիդա Ռազմիկի	
11	Զաքարյան Սուսաննա Հրանտի	
12	Խաչիկյան Գագիկ Վահեի	
13	Բոլորին դեմ եմ	

/քվեաթերթիկ 1/

- Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում «V» -ով նշումներ կատարված են.
  - ա) միայն 5 (հինգ) թեկնածուների ԱԱՀ-ների դիմացի «կողմ» նշումով վանդակում,
  - բ) միայն «Բոլորին դեմ եմ» վանդակում:

#### ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ա. Մկրտչյանի կարծիքով թեկնածուներից 5 հոգու պարտադիր ընտրությունը սահմանափակում է մարդու իրավունքները, ինքը կարող է ընտրել 4-ին, մյուսներին դեմ լինել: Նա նշեց նաև, որ եթե մարդը ընտրում է մեկին, ուրեմն արդեն ընտրել է, եթե դեմ է բոլորին, ուրեմն դեմ է, այսինքն իր կարծիքով 5-ին ընտրելու պարտադրանք չի կարող լինել:

**Պարոն Սերոբյանը** պատասխանեց, որ այստեղ պարտադրանք չկա, պարզապես պետք է ընդամենը հարգել ֆակուլտետային խորհրդի որոշումները, քանի որ նախ 2-ական թեկնածուներ առաջադրվել են մասնագիտական ամբիոններում, այնուհետև ֆակուլտետային խորհուրդներում ընտրվել են 3-ական թեկնածուներ և այժմ գիտական խորհրդի անդամները պետք է ընտրեն նրանցից 5-ին: Պարոն Սերոբյանը շարունակեց, որ 5-ի ընտրության հետ կապված, ուղղակի ուզում է խորհրդի անդամներին հիշեցնել, որ իրենք ունեցել են այդ փորձը. 03.06. 2018թ.-ի թիվ 34 գիտական խորհրդի նիստում հոգաբարձուների խորհրդի անդամների 22 թեկնածուրից ընտրել են 6-ին և իր կարծիքով առաջարկը՝ 12-ից պարտադիր 5-ին ընտրել, ամենաարդյունավետ տարբերակներից մեկն է: Բացի դրանից ներկայացվածը առաջարկ է, գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է առաջարկել իր տարբերակը ընտրության վերաբերյալ և դրանք քվեարկության դնելու արդյունքում կորոշվի ընտրության ձևաչափը:

**Ա. Մկրտչյանի** կողմից առաջարկվեց քվեաթերթիկից հանել «**Բոլորին դեմ եմ**» սյունակը և թեկնածուներից ընտրել ոչ ավել քան 5 հոգի:

Պարոն Սերոբյանը համաձայնեց «**Բոլորին դեմ եմ**» սյունակը հանելու հետ, սակայն հիմնավորեց, որ նույն ձևով կարելի է ոչ ավել 4 կամ 7 հոգի ընտրել:

Խորհրդի անդամների կողմից առաջարկվեց քվեարկության դնել երկու առաջարկները.

1. քվեաթերթիկից հանել «**Բոլորին դեմ եմ**» սյունակը և թեկնածուներից ընտրել 5 թեկնածու
2. քվեաթերթիկից հանել «**Բոլորին դեմ եմ**» սյունակը և թեկնածուներից ընտրել ոչ ավել, քան 5 թեկնածու,

Պարոն Սերոբյանը առաջարկները դրեց քվեարկության.

1. քվեաթերթիկից հանել «**Բոլորին դեմ եմ**» սյունակը և թեկնածուներից ընտրել 5 թեկնածու.

### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

29 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 2:

Պարոն Սերոբյանը նշեց, որ 2-րդ տարբերակը քվեարկության դնելն անիմաստ է: Գիտական խորհրդի նախագահը ներկայացրեց, որ ըստ գիտական խորհրդի գործող կանոնակարգի, որոշումն ընդունվում է խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ուստի ընդունվում է 1-ին տարբերակով առաջարկված քվեաթերթիկի ձևաչափը: Այնուհետև պարոն Սերոբյանի կողմից ներկայացվեց, որ այդ պարագայում կարող են ընդունել, որ առաջին 5 թեկնածուները, որոնք ստանում են ավելի շատ ձայներ, հաղթող են ճանաչվում, անկախ ձայների



քանակից, եթե լինեն հավասար ձայներ ստացող թեկնածուներ, ապա անցկացվելու է ընտրության երկրորդ փուլ:

Պարոն Սերոբյանը ներկայացրեց նաև, որ բոլորովին էլ պարտադիր չէ, որ բոլոր ֆակուլտետներից հոգաբարձուների խորհրդի անդամներ ընտրվեն, դա կախված է փակ գաղտնի ընտրության արդյունքից և հնարավոր է, որ մի ֆակուլտետից ընտրվեն 2 կամ 3 անդամ, հնարավոր է նաև, որ որևէ ֆակուլտետից ընդհանրապես չընտրվեն:

Ընտրությունն անցկացնելու առաջարկված ձևաչափը պարոն Սերոբյանը նույնպես դրեց քվեարկության:

### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

33 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0:

Այնուհետև գիտական խորհրդի նախագահը տեղեկացավ քարտուղարից, թե թեկնածուներից արդյո՞ք ինքնաբացարկ հայտնած անդամներ կան և ստանալով բացասական պատասխան, հանձնարարեց գիտխորհրդի քարտուղարին ձևավորել և պատրաստել փակ գաղտնի քվեարկության համար նախատեսված քվեաթերթիկները:

Գիտխորհրդում ընդունված համապատասխան որոշման հիման վրա ձևավորված քվեաթերթիկները ներկայացվեցին գիտական խորհրդի անդամներին՝ փակ գաղտնիքվեարկություն կազմակերպելու համար /քվեաթերթիկ 2/:

N	ԱԱՀ	ԿՈՂՄ
1	Մանուկյան Վարդան Տրանցի	
2	Նիկողոսյան Հրաչիկ Սուրենի	
3	Վալեսյան Անահիտ Պարզևի	
4	Ալեքսանյան Շուշանիկ Կարապետի	
5	Գևորգյան Լուսինե Վահրամի	
6	Գուլյան Սարգիս Ֆերդինանտի	

7	Խաչատրյան Եղեգնուհի Մկրտչի	
8	Տոնոյան Աշխեն Վլադիմիրի	
9	Ֆարգադյան Հռիփսիմե Ռոբերտի	
10	Գարեգինյան Աիդա Ռազմիկի	
11	Զաքարյան Սուսաննա Հրանտի	
12	Խաչիկյան Գագիկ Վահեի	

/քվեաթերթիկ 2/

- Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում «V» -ով նշումներ կատարված են միայն 5 (հինգ) թեկնածուների ԱԱՀ-ների դիմացի «կողմ» նշումով վանդակում:

Փակ գաղտնի քվեարկություն կազմակերպելու համար նոր ձևաչափով կազմված քվեաթերթիկը հաստատելու հարցը դրվեց քվեարկության.

#### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

33 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահը առաջարկեց գիտական խորհրդի անդամներից ընտրել հաշվիչ հանձնաժողով՝ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար:

Պարոն Մերոբյանն առաջարկեց հաշվիչ հանձնաժողովն ընտրել 5 անդամներից: Առաջարկը դրվեց քվեարկության:

#### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

33 անդամ. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:

Խորհրդի նախագահն առաջարկեց հաշվիչ հանձնաժողովում ընդգրկել Պարոն Ս. Սարգսյանի թեկնածությունը, սակայն պարոն Սարգսյանն ասաց, որ այդ գործընթացն ավելի լավ է կատարում պարոն Մելքոնյանը և իր հերթին առաջարկեց վերջինիս թեկնածությունը: Գևորգ Աղանյանը առաջարկեց Արշավիր Գասպարյանի թեկնածությունը, Անահիտ Հովհաննիսյանը՝ Գևորգ Աղանյանի թեկնածությունը, ուսանողներից առաջարկեցին Ամալյա Գալստյանի և Արուսյակ Գրիգորյանի թեկնածությունները:

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝

1. Մելքոնյան Հովիկ,
2. Գասպարյան Արշավիր,

3. Աղանյան Գևորգ,
4. Գրիգորյան Արուսյակ,
5. Գալստյան Ամալյա

Հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելը դրվեց քվեարկության:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

33 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

Քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի նախագահ պարոն Մելքոնյանը խորհրդի անդամներին տեղեկություն տրամադրեց քվեաթերթիկի լրացման կարգի վերաբերյալ:

Փակ գաղտնի քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ

Հ. Մելքոնյանը հրապարակեց քվեարկության արդյունքները /քվեաթերթիկ 3/

N	ԱԱՀ	Ստացած ձայների քանակ
1	Մանուկյան Վարդան Ֆրանցի	28
2	Նիկողոսյան Հրաչիկ Սուրենի	0
3	Վալեսյան Անահիտ Պարզևի	25
4	Ալեքսանյան Շուշանիկ Կարապետի	4
5	Գևորգյան Լուսինե Վահրամի	26
6	Գուլյան Սարգիս Ֆերդինանտի	2
7	Խաչատրյան Եղեգնուհի Մկրտչի	5
8	Տոնոյան Աշխեն Վլադիմիրի	24
9	Ֆարգադյան Հռիփսիմե Ռոբերտի	2
10	Գարեգինյան Աիդա Ռազմիկի	19
11	Զաքարյան Սուսաննա Հրանտի	3
12	Խաչիկյան Գագիկ Վահեի	12

/քվեաթերթիկ 3/

## **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

I. Հաստատել ՇՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված և բուհի գիտական խորհրդում ընտրված ՇՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամների ցանկը՝ հետևյալ կազմով.

1. Գարեգինյան Աիդա Ռազմիկի՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի «Ռուսաց լեզվի և գրականության» ամբիոնի դոցենտ, բան. գիտ. թեկնածու

2. Գևորգյան Լուսինե Վահրամի՝ մանկավարժության ֆակուլտետի «Մանկավարժության» ամբիոնի դոցենտ, մանկ. գիտ. թեկնածու

3. Մանուկյան Վարդան Ֆրանցի՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների» ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ. գիտ. թեկնածու

4. Վալեսյան Անահիտ Պարզևի՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի» ամբիոնի դոցենտ, աշխարհ. գիտ. թեկնածու

5. Տոնոյան Աշխեն Վլադիմիրի՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի «Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի» ամբիոնի դասախոս

II. Միջնորդությամբ հանդես գալ ՀՀ ԿԳՄՍ նախարարություն ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամության՝ ՇՊՀ-ի կողմից առաջադրված և ընտրված կազմը ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնելու համար

## **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

32 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, Գիտական խորհրդի անդամներից 1-ը՝ Ա. Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը

### **2.2.1 ԼՍԵՑԻՆ՝**

**ՇՊՀ-ում ուսումնասիրություն չիրականացվող մասնագիտությունների գծով լիցենզիայի գործողությունը դադարեցնելու եվ ՇՊՀ-ի բակալավրի կրթական ծրագրի (իրավագիտություն) լիցենզավորման փաթեթում ներառված ուսումնական պլանի հաստատման մասին**

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ իրավագիտություն մասնագիտությամբ բուհում իրականացվում է հեռակա և մագիստրոսական կրթական ծրագրերով կրթություն, բայց բակալավրի կրթական ծրագրով առկա կրթություն իրականացնելու համար լիցենզիա չունեն: Նա նշեց նաև, որ բակալավրի կրթական ծրագրով «Իրավագիտության» փաթեթն ամբողջությամբ պատրաստ է, ասաց նաև, որ այն անցյալ տարի ներկայացվել էր ԿԳՄՍ նախարարություն՝ լիցենզիա ստանալու

համար, սակայն խնդիր էր առաջացել և լիցենզիան մերժվել էր զուտ շենքային պայմաններով պայմանավորված:

Այնուհետև պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ իրենք ստացել է ԿԳՄՄՆ նախարարի 17.03.2021թ.-ի 01/28.1/4655-2021 գրությունը, որտեղ նշվում էր, որ նոր մասնագիտությունների գծով հայտեր ներկայացնելիս հաստատության ուսումնական տարածքները հաշվարկվում են լիցենզիայով տրված բոլոր մասնագիտությունների սահմանային տեղերի հաշվարկի հիմքով (նոր մասնագիտությունների գծով գործունեության թույլտվության տալու դեպքում կարող են առաջանալ լիցենզավորման պայմաններն ապահովելու խնդիրներ, մասնավորապես ուսումնական տարածքների մասով):

Պարոն Սերոբյանը նշեց, քանի որ իրենք այս խնդրի հետ բախվել են և ցավոք սրտի, մերժում են ստացել, ուստի բուհի ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի հետ խիստ ուշադիր ուսումնասիրել են գրությունը, որով առաջարկվում էր. եթե ուսումնական հաստատությունը որևէ մասնագիտության գծով ուսումնառություն չի իրականացնում, դիմել ՀՀ ԿԳՄՄՆ՝ այդ մասնագիտության գծով լիցենզիայի գործողությունը դադարեցնելու համար: Պարոն Սերոբյանը գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց ՇՊՀ հիմնադրամի այն մասնագիտությունները, որոնց լիցենզիայի գործողությունը դադարեցնելու համար դիմելու են ԿԳՄՄՆ:

Պարոն Սերոբյանը նշեց, որ այդ պարագայում տարածքների հետ կապված խնդրով կրթական ծրագրերի լիցենզիա ստանալու մերժում, իր կարծիքով չեն ստանա:

### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Դիմել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարարություն ՇՊՀ-ում հետևյալ մասնագիտությունների գծով լիցենզիաների գործողությունները դադարեցնելու համար.

Դասիչը (ծածկագիրը)	Կրթության ձևը	Մասնագիտությունը, <i>Կրթական ծրագիրը</i>
011400.10.6		Մասնագիտական մանկավարժություն
	Առկա Հեռակա	011400.10.6 Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա
011401.12.6	Առկա Հեռակա	Տեխնոլոգիա և ձեռնարկչություն
032201.00.6		Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ

	Հեռակա	032201.01.6 Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ
103201.00.6		Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում
	Առկա Հեռակա	103201.04.6 Փրկարարական գործ

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

32 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ իրավագիտություն մասնագիտության առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրով լիցենզիա ստանալու համար ԿԳՄՄ ղիմելու պարագայում առկա են ամբիոնի նիստի արձանագրությունը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, փաթեթը պատրաստված է պատշաճ մակարդակով և մնում է իրենց գործընկերներին հաջողություն մաղթել մինչև նախարարությունում քննարկվի ուսումնական պլանը: Տիկին Ավետիսյանը նշեց նաև. քանի որ արդեն նախօրոք ծանոթացել են «Իրավագիտություն» մասնագիտության առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրով ուսումնական պլանին, առաջարկվում է գիտխորհրդին ուսումնական պլանի հաստատման համար քվեարկություն կազմակերպել, նաև շնորհակալություն հայտնել ամբիոնին և ֆակուլտետին կատարված աշխատանքների համար:

**2.Հաստատել «Իրավագիտություն» մասնագիտության առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրով ուսումնական պլանը և լիցենզավորման փաթեթը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարարություն լիցենզիայի ձեռք բերման համար:**

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

33 անդամ. կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**2.2.2 ԼՄԵՑԻՆ՝**

**2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ՇՈՂ-ի մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանողների ուսումնական գործընթացն իրականացնելու մասին**

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ բուհում ուսանողների բացակայությունների հետ կապված ամբողջ կիսամյակի ընթացքում ուսումնասիրություն է կատարվել և ունեն, հատկապես մագիստրոսների բացակայությունների բարձր տոկոս: Նա խորհրդի անդամներին տեղեկացրեց նաև, որ ԿԳՄՄ նախարարությունը բոլոր բուհերից պահանջել էր ներկայացնել տվյալներ աշխատող մագիստրոսների թվի վերաբերյալ և պարզվել է, որ իրենց բուհում մագիստրոսների 54.2 տոկոսը աշխատողներ են:

Պարոն Սերոբյանը նշեց, որ այս հարցը քննարկվել է ամբիոնի վարիչների, դեկանների հետ և նրանց մեծ մասն էլ հաստատում է, որ մագիստրոս ուսանողների բացակայությունները մեծ տոկոս են կազմում: Ապա պարոն Սերոբյանը շարունակեց. - կապված նաև համավարակի այսօրվա իրավիճակի հետ, հնչել է առաջարկություն մագիստրոսների ուսումնառությունը, բացի կրթության հատուկ պայմաններ պահանջող պարապմունքներից՝ իրականացնել առցանց ուսուցմամբ: Ապա Պարոն Սերոբյանը ասաց, որ առցանցի պայմաններում ուսանողների ներգրավվածությունը տվյալ դասապրոցեսին ավելի շատ կլինի: Անցած տարվա փորձից դուրս գալով, երբ առցանց տարբերակով դասապրոցեսին միանում էին նաև «Դասավանդիր Հայաստան» ծրագրով համալսարանում սովորող ուսանողները, հաստատ դրական արդյունք տվեց, քանի որ առկայի պայմաններում նրանք չէին կարող մասնակցություն ցուցաբերել, այդ ժամերին աշխատանքի էին: Պարոն Սերոբյանը շեշտեց, որ այս հարցի կապակցությամբ ուզում է լսել նաև գիտական խորհրդի անդամների կարծիքները, որպեսզի ճիշտ որոշում կայացնեն, հասկապես, որ իր մոտ, կարծես, երկմտանք կա մագիստրոսների պարապմունքները առցանց անցկացնելու հետ կապված:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** **Ն. Ավետիսյանը** նշեց, որ վիճակագրությունը կատարվել է 432 մագիստրոսների պարագայում և նրանցից 155-ն աշխատում են իրենց մասնագիտության ոլորտում՝ 35.8 տոկոսը, իսկ աշխատող ուսանողների թվաքանակը 54.2 տոկոս է: Տիկին Ավետիսյանը շեշտեց, որ իր ներկայացրածը տեղեկատվություն է:

**Լ. Մարտիրոսյանի** կարծիքով, գոնե մինչև կիսամյակի ավարտը կարելի է անցնել առցանց ուսուցման, այն նկատառումով, որ համավարակի ավելացման պայմաններում կթեթևանա ուսանողների խտությունը, հասկապես, որ 20 օրից հեռակայի ուսանողների դասերն են սկսվելու: Պարոն Մարտիրոսյանը նշեց, որ ինքը մի նկատառում էլ ունի, ցանկալի է, որ մեր բուհը այլ բուհերի նման մագիստրատուրայի հեռակա բաժին ունենա, ճիշտ է, ուսումնառությունը մեկ տարով ավելի է, սակայն ավարտական գործընթացը հունվարին է, և իր կարծիքով ծանրաբեռնվածություն չի ստեղծի բուհի համար:

**Պարոն Սերոբյանը** արձագանքեց որ սա ենթադրում է բոլոր կրթական ծրագրերով նոր լիցենզիաների ստացում :

**Պարոն Սերոբյանի** կարծիքով, եթե բուհը և՛ առկա, և՛ հեռակա մագիստրական կրթություն իրականացնի, ապա թերբեռնված խմբերի քանակը ահռելի կմեծանա, ուստի հստակ պետք է կողմնորոշվել՝ կամ առկա, կամ հեռակա: Պարոն Սերոբյանը շարունակեց, որ այս հարցը կարելի է քննարկել և հիշեցրեց, որ ամբիոնի վարիչների հետ պայմանավորվածություն է եղել մինչև ս/թ-ի նոյեմբերի 1-ը նրանց կողմից ուսումնական պլանների և կրթական ծրագրերի բարեփոխումների հետ կապված առաջարկություններ ներկայացնել ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն, ապա մինչև նոյեմբերի 10-ը ի մի բերել այդ առաջարկությունները: Պարոն Սերոբյանը նշեց, որ այդ տեսանկյունից խնդրում է ամբիոնի վարիչներին և դեկաններին վերոհիշյալ հարցի մասին նույնպես մտորել և ներկայացնել առաջարկություններ:

**Ա. Սարգսյանի** կարծիքով, մագիստրոսական այն առարկաների մասով, որոնք հատուկ պայմաններ չեն պահանջում, ճիշտ է անցնելու առցանց ուսուցման, իսկ հատուկ պահանջներով պարապմունքները կկազմակերպվեն համալսարանում, ուստի ուսման որակը չի տուժի, իսկ ուսանողների ներգրավվածությունը պարապմունքներին միանշանակ կմեծանա: Ա. Սարգսյանը նշեց, որ սա նկատելի է եղել բոլոր բուհերում առցանց տարբերակով աշխատելիս:

**Պարոն Սերոբյանը** հաստատեց, որ իրո՞ք, այս խնդիրը առկա է հանրապետության բոլոր բուհերում:

Գիտական խորհրդի նախագահը նշեց, որ խորհրդի անդամ մագիստրոս ուսանողների կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ նույնպես կարևոր է և դիմեց ուսանողներին մասնակցել հարցի քննարկմանը:

**Ամալյա Գալստյանը** ներկայացրեց, որ ինքը մաթեմատիկա մասնագիտությամբ 2-րդ կուրսի մագիստրոս է և զուգահեռ աշխատում է: Նրա կարծիքով մագիստրատուրայում առցանց ուսուցումը ճիշտ որոշում է, սակայն ուսման որակի բարձրացման առումով այնքան էլ համաձայն չէ, քանի որ առցանց պարապելիս երբեմն դասախոսին հարց տալը, կարծես թե, չի ստացվում:

Պարոն Սերոբյանը արձագանքեց Ամալյային, որ դրա համար եթե կա օբյեկտիվ պատճառ, հասկանալի է, բայց եթե սուբյեկտիվ է, դա անհասկանալի է:

**Ռազմական ամբիոնի պետ . Մկրտչյանի** կարծիքով, կան ուսանողներ, որոնք չեն աշխատում և արդյո՞ք կարիք կա, որ նրանք անցնեն առցանց ուսուցման:

**Տիկին Ավետիսյանն** արձագանքեց, որ առցանց ուսուցման անցնելը պայմանավորված է ոչ միայն մագիստրոս ուսանողների աշխատելու հարցի, այլ ավելի շատ համավարակի բարձր տեմպերի հետ, որն այսօր կա հանրապետությունում:

**Տիկին Ղուկասյանը** նշեց, որ առցանց ուսուցումը ժամանակավոր է, համավարակի պայմաններում դա կանխարգելման մեխանիզմներից մեկն է, ապա շարունակեց, որ բացակայող ուսանողների որոշ մասն էլ հիվանդ են, կամ եթե տանը կան հիվանդներ, ապա բացակայում են, քանի որ մեկուսանում են, որպեսզի չվարակեն իրենց կուրսեցիներին: Ուստի իր կարծիքով ճիշտ է ժամանակավոր անցնել առցանց ուսուցման:

Պարոն Սերոբյանը դիմեց պարոն Ս. Սարգսյանին, թե ի՞նչ կարծիք ունի նա այս հարցի կապակցությամբ:

**Պարոն Սարգսյանն** ասաց, որ իր կարծիքով հարցը պետք է քննարկել ամբիոններում, ֆակուլտետներում, հետո ներկայացնել ռեկտորատ, ապա գիտական խորհրդում:

**Պարոն Սերոբյանն** արձագանքեց, որ եթե հարցը բարձրացվում է գիտական խորհրդում, ուրեմն քննարկվել են ամբիոններում և ֆակուլտետներում:

**Տիկին Թ. Մելիքյանն** ասաց, որ մագիստրոսների բացակայությունների հարցը միշտ էլ խնդիր է եղել բուհում, այդ պատճառով էլ բազմագործոնային գնահատումից



հաճախումների գործոնը դուրս է բերվել մագիստրատուրայում և առաջարկեց այլ բուհերի փորձից դուրս գալով, համավարակի պայմաններում հատկապես, մագիստրոսներն ժամանակավոր անցնեն երեկոյան կրթության:

**Պարոն Մերոբյանն** արձագանքեց, որ երեկոյան ուսումնառությունը աշխատանքային օրենսգրքի հետ խնդիրներ կառաջացնի:

**Պարոն Մերոբյանի** կարծիքով ավելի արդյունավետ տարբերակ կլինի առցանց կրթությունը մագիստրատուրայում, քան հեռակա ուսուցումը, ապա ասաց.-միգուցե արժե այս տարբերակին անցնել:

**Ն. Ավետիսյանն** ասաց, որ կան մի քանի փաստարկներ, որով պայմանավորված ճիշտ կլինեն, որ գիտական խորհրդի որոշումը լինեն հոգուտ առցանց պարապմունքների. առաջինը, որ ունեն այն, ինչ ունեն՝ բացակայությունների առումով, ապա, որ գիտական խորհրդի հարգարժան անդամները շատ լավ կհիշեն՝ բուհի կողմից մագիստրատուրայում անհատական գրաֆիկի անցման ընթացակարգ ընդունվեց, տարբեր միջոցներով փորձելով օրինական դաշտ բերել այն, ինչը արվում էր և այսօր ժամանակը, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը շատ լավ առիթ են ստեղծում այս որոշումն ի կատար ածելու համար և բերել այն օրինական դաշտ՝ ի օգուտ ուսանողի, քանի որ այդ պարագայում նույն հիմնավորմամբ մագիստրատուրայում բազմագործոնային գնահատումից հանվել է հաճախումների գործոնը, հենց ելնելով այդ փաստից: Տիկին Ավետիսյանը շարունակեց, որ հիմա էլ կան այն հիմքերը, որ աշխատող մագիստրոսների քանակը և հատկապես իրենց մասնագիտությամբ աշխատողները մեծ տոկոս են կազմում, փաստացի կատարած ստուգումների արդյունքում առկա է սա և կան կուրսեր, որտեղ բացակայությունները 63 տոկոսի են հասնում: Այս պարագայում կբարձրանա թե դասախոսի աշխատանքի արդյունավետությունը, թե ուսանողների ստացած գիտելիքները, որակի մասին խոսակցություն լինել չի կարող, այն պարագայում, երբ ուսանողը դասապրոցեսին չի մասնակցում:

**Պարոն Մերոբյանը** ղեկաններին հարց ուղղեց, թե դասացուցակի հետ կապված հարցերը տեխնիկական տեսանկյունից ինչքա՞ն ժամանակում կլուծվեն, եթե անցնեն առցանց ուսուցման:

Դեկանները պատասխանեցին, որ դասացուցակով ամրագրված օրերը փոփոխության չեն ենթարկվի, միայն փոխվելու են ժամերը՝ դասախոսների և մագիստրոս ուսանողների հետ համաձայնեցման արդյունքում, ուստի ժամանակատար չէ, և կարող են մեկ- երկու օր հետո անցնել առցանցի: Սակայն պարոն Մերոբյանը չհամաձայնեց նրանց հետ և հանձնարարեց դասացուցակի հետ կապված հարցերը կարգավորել, իսկ եթե որոշումն ընդունվի խորհրդի կողմից, ապա առցանցի անցնել հոկտեմբերի 18-ից: Այնուհետև պարոն Մերոբյանի կողմից արտահայտվեց այն միտքը, որ սկզբում էլ նշեց իր կողմից, իր մոտ երկմտանք կար այս հարցի առնչությամբ, սակայն լսելով խորհրդի անդամներին հակված է ավելի դրական կարծիքի, հատկապես, որ ն՝ աշխատող մագիստրոսները, և՛ «Կրթություն Հայաստանի» ուսանողները կմասնակցեն պարապմունքներին: Իր կարծիքով սա ճիշտ որոշում կլինի, դասին չմասնակցելը ավելի բարձր որակ չի կարող ապահովել, քան առցանց ուսուցումը:

Այնուհետև պարոն Մերոբյանը հարց ուղղեց գիտական խորհրդի անդամներին, ասելով, որ իրենք բոլորն էլ անցած կիսամյակում պարապել են առցանց, արդյո՞ք

ուսանողների հաճախելիությունը զգալիորեն տարբերվում էր այս կիսամյակի հետ համեմատած:

**Տիկին Ավետիսյանը** պատասխանեց, որ բուհի «Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման» կենտրոնը հենց այդ հարցի հետ կապված հարցումներ է իրականացրել մագիստրոս ուսանողների շրջանում:

**Ա. Սարգսյանը** նշեց, որ իր կարծիքը հենված է նաև ուսանողների կարծիքի վրա, քանի որ հարցումներով դա արտահայտվել է և՛ ուսանողների, և՛ դասախոսների կողմից, ուսանողների ներգրավվածությունը պարապմունքներին ավելի բարձր է առցանցի պարագայում:

Տիկին Ղուկասյանը նշեց, որ «Հատուկ մանկավարժություն և լոգոպեդիա» կրթական ծրագրի շրջանակում, այն դասախոսները, որոնք հրավիրված են Երևանից, այս պահին էլ իրենց պարապմունքներն առցանց են անցկացնում և ուսանողներից երբ ինքը կարծիք է հարցնում, գոհունակություն են արտահայտում այդ տարբերակով դասապրոցեսն անցկացնելու համար, ինչպես նաև մասնակցությունն է զգալիորեն տարբեր, բոլոր ուսանողները մասնակցում են առցանցի պարագայում:

Մերոբյանը նորից խոսեց դասացուցակի կարգավորման մասին՝ նշելով, որ բոլոր ֆակուլտետներից այն տրամադրվելու է ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնին՝ վերահսկողություն իրականացնելու համար, ինչպես նաև որակի կենտրոնին՝ իր մասով հարցումներ իրականացնելու, որպեսզի հասկանալի լինի, թե գործընթացն ինչքանով է օգտակար եղել:

Օ. Հովհաննիսյանը առաջարկեց 1 կամ 2 օրից անցնել առցանց ուսուցման, քանի որ բացակա ուսանողների 60 ժամը լրանում է, սակայն պարոն Մերոբյանն ասաց, որ մագիստրոսները շաբաթվա 3 օրն են ծանրաբեռնված և մինչև հոկտեմբերի 18-ը առավելագույնը 2-3 ժամ են բացակայելու, ուստի դասացուցակի կարգավորման նպատակահարմարությունից էլ դուրս գալով ավելի լավ է գործընթացն սկսել հոկտեմբերի 18-ից:

## **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

**Հիմք ընդունելով ԿԳՄՄՆ նախարարի 31.08.2021թ.-ի 01/11.2/19031-2021 գրությունը, Covid 19-ով պայմանավորված առկա իրավիճակը և ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները սույն թվականի հոկտեմբերի 18-ից մագիստրոսի կրթական ծրագրերով սովորողների ուսումնական գործընթացն իրականացնել առցանց եղանակով՝ բացառությամբ ուսումնառության հատուկ պայմաններ պահանջող պարապմունքների (լաբորատորիաներ, մարզադահլիճներ, հատուկ կահավորմամբ կաբինետներ և այլն)՝**

**1. առաջին կուրսերի ուսանողների համար՝ մինչև 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի մեկնարկը,**

**2. երկրորդ կուրսերի ուսանողների համար՝ մինչև 2021-2022 ուսումնական տարվա նոյեմբերի 15-ը:**

## **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

25 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

Գիտական խորհրդի նախագահ՝  
Գիտական խորհրդի  
քարտուղար՝

Ե. ՍԵՐՈՒՅԱՆ

Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

- 1. Գիտական խորհրդի անդամներ
- 2. Գիտական խորհրդի անդամներ
- 3. Գիտական խորհրդի անդամներ
- 4. Գիտական խորհրդի անդամներ
- 5. Գիտական խորհրդի անդամներ
- 6. Գիտական խորհրդի անդամներ
- 7. Գիտական խորհրդի անդամներ
- 8. Գիտական խորհրդի անդամներ
- 9. Գիտական խորհրդի անդամներ
- 10. Գիտական խորհրդի անդամներ
- 11. Գիտական խորհրդի անդամներ

- Գիտական խորհրդի անդամներ
- Գիտական խորհրդի անդամներ
- Գիտական խորհրդի անդամներ
- Գիտական խորհրդի անդամներ
- Գիտական խորհրդի անդամներ
- Գիտական խորհրդի անդամներ
- Գիտական խորհրդի անդամներ
- Գիտական խորհրդի անդամներ
- Գիտական խորհրդի անդամներ
- Գիտական խորհրդի անդամներ
- Գիտական խորհրդի անդամներ